

## ՋԻՎԱՆԻ

### *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

Կուգան ու կերթան

Գուշակություն

Պրծրնիք

Հույս

Շատ ուշագավ

Հարավեն պիտի գա

Հայրենիք

Սասունասար

Թող մնա

Երգ

Խելքի աշեցեք

Եղած՝ չեղած մեկ հաշիվ է

Հպարտ հարուստ

Անհավանք

Արծաթ

Դատողություն

Խրատ ազոավին

Ծեփած պատ

Արլոր եղբայր

Ստախոսք

Խենթ ոչխարները

## ԿՈՒՊԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ

Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,  
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.  
Դառն ցավերը մարդու վերա չեն մնա երկար,  
Որպես հաճախորդ շարվեշարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղություն ազգերի գլխից  
Ինչպես ճանապարհի քարավան կուգան ու կերթան,  
Աշխարհը բուրաստան է հատուկ, մարդիկը ծաղիկ,  
Ո՛րքան մանուշակ, վարդ բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենա, ոչ տկարը տխրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան,  
Արևը առանց վախենալու ցայտում է լույսը,  
Ամպերը դեպի ադոթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսյալ զավակին է փայփայում մոր պես,  
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան.  
Աշխարհը հյուրանոց է, Ջիվան, մարդիկը հյուր են,  
Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան:

## ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Կերթա՛ն այս օրերը, էլ ետ չեն դառնա,  
Մեզի կժամանեն երջանիկ օրեր.  
Հոգիս գուշակում է բարի ապագա,  
Նրա հետ միասին գեղեցիկ օրեր:

Նեղության դիմացող տոկուն ժիր մարդը  
Բանի տեղ չի դնիլ կարկուտի ջարդը.  
Փուշը մենք կքաղենք, որդիքս՝ վարդը,  
Նրանք պիտի տեսնեն անուշիկ օրեր:

Ջիվանի, պիտի պարզե երկինք կապուտակ,  
Կը հաջորդե զվարճալի եղանակ.  
Աստուծով, այս վատ օրերու տեղակ,  
Պիտի տեսնենք լավը հինգապատիկ օրեր:

1887

---

## ՊԲԾԸՆԻՆՔ

Աջողության գեղեցկուհին պիտի գա,  
Ասում են — ասում են չի գա պրծրնինք.  
Խոսում են պատկերը մեզ պիտի ցույց տա,  
Ո՞ր է, թե մի անգամ ցույց տա՝ պրծրնինք:

Հիշյալ գեղեցկուհին յուր դրոշակը  
Չը պարզած՝ դեպի ձախ թեքվեց վիճակը,  
Դժբախտության ծովը մտավ բավակը,

Ոչ կընկղմի, ոչ կը լողա՝ պրծընինք:

Ջիվանի, լույս չի տա ջահը յուր տեղը  
Կամ պատրույզն է հատել, կամ միջի եղը.  
Մեր փըլիըլուն կիսախավար կանթեղը,  
Ոչ կը մարի, ոչ կը շողա՝ պրծընինք:

1898

### ՀՈՒՅՍ

Առավոտը շատ մոտ է, լույսը շողալուն քիչ մնաց.  
Խավարը ընկավ գետին, արևը գալուն քիչ մնաց.  
Համբերանքդ ծով արա, հույս ու հավատդ պինդ պահիր,  
Ո՛վ, գիշերից ձանձրացող, բախտիդ խաղալուն քիչ մնաց:

Լուսնի պաղ երեսից շուտով կազատվիս, մթնակյաց,  
Ջերմ ու կարմիր արփենու կայծը եռալուն քիչ մնաց,  
Ցերեկը եկավ տիրեց գիշերային ամրոցներուն,  
Խավարը հոգու հետ է, յուր կյանքը տալուն քիչ մնաց:

Լուսաբերը մթության թագուհու տեղ գահ բարձրացավ,  
Ցնծության երգեհոններու որոտալուն քիչ մնաց:  
Մարտի տասն է, Ջիվանի, սխտոր ունիս, շուտ վերջացուր,  
Գարուն է արդեն, գիտենք, ամպը գոռալուն քիչ մնաց է:

1889

## ՇԱՏ ՈՒՇԱՑԱՎ

Փրկության ավետաբեր սուրհանդակը շատ ուշացավ.  
Ուրախության լուր տվող մեր նամակը շատ ուշացավ.  
Իմ մորս եղբայրները իմ մասին իսկի չեն խոսում,  
Կրթըված, թղթիկ բերող աղավնյակը շատ ուշացավ:

Քիչ կմնա ունեցած հույս ու հավատս կորսըվին,  
Խավարը ինձ տանջում է, աշտանակը շատ ուշացավ.  
Լրիվ երկու տարի է սպասում եմ մեկ ձայնի ես,  
Ողջ ժամերը կանգնեցան, ժամանակը շատ ուշացավ:

Խեղճ հավի արյուն խմող գող ուրուրը ապրում է դեռ,  
Երկնային մեծ հարվածը, ուժանակը շատ ուշացավ,  
Ով Ջիվան, հորիզոնը կարկրտի ամպեր շատ ունի,  
Հաշտության կամար կապող աղեղնակը շատ ուշացավ:

1897

---

## ՀԱՐԱՎԵՆ ՊԻՏԻ ԳԱ

Ավետաբեր խոսնակը հայուն հարավեն պիտի գա,  
Կսպասեմ և հույս ունիմ, գարուն հարավեն պիտի գա,  
Հյուսիսը պետք է հրամայե, թախանձե իսկապես,  
Իմ սիրուհին պըճնված սիրուն հարավեն պիտի գա:

Արևելքը ոչ մի ժամ արևմուտքից բան չսպասե,  
Քաղցրախոս, մխիթարիչ թռչուն հարավեն պիտի գա:  
Փրկիչը հարավային կողմից եկավ մեզ փրկելու,

Այնպես էլ մեծ առաքյալ արթուն հարավեն պիտի գա:

Շատ վաղուցվա ամուլը հղի, այժմ կարծում են,  
Երբ լինի արու զավակ, արբուն հարավեն պիտի գա.  
Երբ բարով մկրտության հասնի մանուկը, ով Ջիվան,  
Կնքողից բարձրապատիվ անուն հարավեն պիտի գա:

### ՀԱՅՐԵՆԻՔ

Երբ որ լինի գարնանամուտ, նոր գարուն,  
Կբազմանան վտակներդ, հայրենիք,  
Շարեշար ցնծությամբ, երգով զվարթուն,  
Շարժվում են բանակներդ, Հայրենիք:

Օդըդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,  
Պես-պես գունով ծաղիկներդ դալարուն  
Չեն դադարել աշխատելուց օրնիբուն  
Քո հարազատ մշակներդ, Հայրենիք:

Մարդիկ կուգան քո սարերդ ման գալու,  
Իբր որսորդ եղնիկներդ որսալու,  
Ե՞րբ կփոխեն երգը ուրախ կարդալու,  
Քո սքազգյաց սոխակներդ, Հայրենիք:

Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկա,  
Քո միջիցդ անմահության հոտ կուգա,  
Հազար ափսոս, մարդուց թափուր են հիմա  
Քաջ բազմամարդ վիճակներդ, Հայրենիք:

## ՄԱՍՈՒՆԱՍԱՐ

Առանց վախի, առանց ահի  
Քաջերու տուն, Սասունասար,  
Քեզնից հրդեհ կպատահի,  
Կրակի բուն, Սասունասար:

Այնպես դիրք բռնեց Հովնանը,  
Որ սարսեց Արաբիստանը,  
Քեզ չհաղթեց Չինգիզ խանը,  
Կեցար կանգուն, Սասունասար:

Հայաստանը նոր կանաչեց,  
Թշնամին տեսավ՝ ամաչեց,  
Եվրոպան քեզի ճանաչեց,  
Առար անուն, Սասունասար:

Վերացավ խավար գիշերը,  
Վառվեց երկնային լապտերը:  
Կսպասեն բոլոր հայերը,  
Քեզնից գարուն, Սասունասար:

## ԹՈՂ ՄՆԱ

Թող մնա մեկ ժամանակ, առյուծը թմրած թող մնա,  
Խաժամուժ կենդանիների մեջը ընկած թող մնա,  
Մեռածը չի ողջանալ, գլորածը վեր կկենա,  
Թույլ տվեք, ախոյանի ժամը չէ, պառկած թող մնա:

Անտեղի քաջությունը վնաս կուտա իմ կարծիքով,

Երբ լինի կարկուտ, քամի, եղեգը սմբաձ թող մնա,  
Տաք ու պաղ սուլելովդ մի գրգռեր, խարդախ թովիչ,  
Թող մնա յուր բնի մեջ, վիշապը սառած թող մնա:

Ջրի շատ գալը՝ խելացի, կտրելու նշան է միշտ,  
Թող ծովը ծփա հատուկ, գետը վարարած թող մնա,  
Ով Ջիվան, ամեն հայի սրտի մեջը երկար միջոց  
Հնության հիշատակը, կայծը բռնկած թող մնա:

## ՄԻ ԱՍՏՂ

Մի աստղ ծնավ արևելքեն, լույս ուներ առատ,  
Բոլոր աստղերի մեջ մեկ էր, չուներ համեմատ,  
Սև-սև ամպեր շուտ պատեցին, չթողին ազատ,  
Խավարի մեջ անհետացավ, լոկ գիծը մնաց,  
Աստղադիտաց սրտերու մեջ կսկիծը մնաց:

Այդ աստղերը հինգ քույր էին, մեկը չուներ լույս,  
Չորսը արևի շնորհիվ առան խրախույս,  
Առաջինին ոչ մի տեղից տվող չեղավ լույս,  
Խավարի մեջ անհետացավ, լոկ գիծը մնաց,  
Աստղադիտաց սրտերու մեջ կսկիծը մնաց:

Յոթը փայլուն, մեծ-մեծ աստղեր ժողովան գումար,  
Լուսնից ասպարեզ ուղեցին չորս աստղի համար,  
Արևելքեն ծնվող աստղը մնաց ի շվար,  
Խավարի մեջ անհետացավ, լոկ գիծը մնաց,  
Աստղադիտաց սրտերու մեջ կսկիծը մնաց:



## ԵՐԳ

Հայի մոտ հայ է, թուրքի մոտը թուրք,  
 Բախտախնդիր, քծնող, հացկատակ մարդը.  
 Ոչ մի հաստատության նա չի տալիս տուրք,  
 Ձրիակեր ցեց է այդ տեսակ մարդը:

Աչք կտնկե երկրագործի արորին,  
 Խլում է գեղջուկի եզր և ջորին.  
 Գռում, գոփում, կողոպտում է անգորին,  
 Ջոկ պարապմունք չունի ավագակ մարդը:

Ջիվան, միմոսի պես միշտ անում է խաղ.  
 Երկու երեսանի արուէգ ճիվաղ,  
 Ծնվածին օրորոց, մեռածին դագաղ  
 Պատրաստ է լինելու երկգունակ մարդը:

## ԽԵԼՔԻ ԱՇԵՑԵՔ

*Նվեր պեքսանդրապոլցի Պ. Հովհաննես Խոջայանցին*

Անմիտ ճնճողուկը բազեի ճանկից  
 Ուզում է որս խլել, խելքի՛ աշեցեք.  
 Կարծես ձանձրացել է գլխից ու գանգից,  
 Պատերազմ է մտել, խելքի՛ աշեցեք:

Խելքին զոռ տալով է հիմա ամեն բան,  
Հիմարն էլ իմաստուն կարծում է իրան,  
Նիհար հավը պարարտ, մեծ սագի նման  
Ուզում է ձու ածել, խելքի՛ աշեցեք:

Ազնիվ մարդը անարգվում է գեշի հետ,  
Երիվարը լուծ է քաշում էշի հետ.  
Երկու տարվա հորթը ցուլ-գոմեշի հետ  
Բերել կամ են լծել, խելքի՛ աշեցեք:

Գայլը վրան ոչխարի մորթի առած,  
Գառներուն պահապան հսկող է դառած.  
Աքլորը քարոզչի վերարկու հագած  
Ամբիոն է ելել, խելքի՛ աշեցեք:

Ուղտը մետաքսագործ, եզը նավավար,  
Գայլը հովիվ դառած կարածե ոչխար.  
Աղվեսը հավնոցի դռանն հուշարար,  
Ի՞նչ հսկող են գտել, խելքի՛ աշեցեք:

Երեխան ձեռն առած փտած, հին լարը,  
Բռնել կամի դարձող ջաղացի քարը.  
Գաճաճ մուկը շրջել կուզե մեծ սարը,  
Կողքը դեմ է տվել, խելքի՛ աշեցեք:

Ուրացողը խիղճ չունի ամեննին,  
Չըզգալով, սպիտա՛կ ասում է սևին,  
Կույրը չտեսնելով լույսը արևին,  
Աշխատում է ստել, խելքի՛ աշեցեք:

Ավել հոգսը վնաս կուտա յուր անձին,  
Ուրիշի ցավերը առնելով վզին,

Գայլը հռչոտել է մարդացեց մեկին,  
Խենթը սև է հագել, խելքի՛ աշեցեք:

Գորտը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,  
Դուրս ելավ, բաժինն է վիշապի փորին.  
Իրար հետ սուտ կովել են ձին ու ջորին,  
Էշը մեջ է ընկել, խելքի՛ աշեցեք.

Ժլատն աշխատելու է շատ ընդունակ,  
Յուր հացը ուտելու չունի ախորժակ.  
Խեղճ անձը գրկելով դիզել է ստակ,  
Ուրիշն է վայելել, խելքի՛ աշեցեք:

Հանցավոր հարուստը ուրախ խնդալով,  
Մեղքից ազատվել է մեծ գումար տալով.  
Խեղճ մարդը սխալմամբ մի հավ գողնալով  
Բանտի մեջ է փտել, խելքի՛ աշեցեք:

Մարդ կա գերդաստանը պահում է ցամաք,  
Կերթա, դուրսը կուտե մեղր ու սեր, կարագ,  
Այլոց համար կանե ձայնով պատարագ,  
Իրան ժամ չի անել, խելքի՛ աշեցեք:

Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար  
Բնակիչները հայ, մոտ քսան հազար.  
Իրանք սնունդ չունին ապրելու համար,  
Հինգ հատ վանք են շինել, խելքի՛ աշեցեք:

Ինչ կենդանի ուզե լինել շանսատակ,  
Կերթա ու կըմտնի ծանր բեռի տակ.  
Նապաստակը առյուծի դեմ համարձակ  
Կռիվ է սկսել, խելքի՛ աշեցեք:

Ցորենը մի անգամ լինելով տկար,  
Այնպես բույս չեն գտել, որ անեն նշխար.  
Կորեկ հացը իրան կարծելով հարմար  
Սեղան է բարձրացել, խելքի՛ աշեցեք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,  
Ասպարեզը համբակներուն են թողած.  
Ջիվանն էլ կաղ իշով կարավան մտած  
Բանաստեղծ է դարձել, խելքի՛ աշեցեք:

1883

### ԵՂԱԾ՝ ՉԵՂԱԾ ՄԵԿ ՀԱՇԻՎ Է

Ծույլ, անպիտան, անգործ մարդը  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է.  
Ինչպես անգույն, անհոտ վարդը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Ինչ պետք է թույլ գլխավորը,  
Որ միակը ցնում է փորը,  
Տգետ, մովի կարգավորը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Լավ մարդու ոտացն է կացին,  
Թե որ վատ է յուր դրացին,  
Հորը համար անպետք որդին,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Ինքն է յուր քսակի գողը,  
Տանը վրա մաղող հողը.

Շոայլ մարդու համար փողը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Ներքինին ինչ պետք է կին,  
Շքեղ սեռից չունի բաժին.  
Կույրի համար արև, լուսին,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Անասունին տուր գովասանք,  
Նա ինչ գիտե այդպիսի կյանք.  
Անզգամին պատիվ, հարգանք,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Մոտ է այնպիսի կորուստը,  
Չորս չափ կտավ և հագուստը.  
Ժլատ, անօգուտ հարուստը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Կենդանի մարդուն է արժան,  
Պատիվ, հարգանք, շքանշան.  
Մեռած մարդու համար արձան,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Խելոք, հմուտ գիտնականը,  
Հիմքը ամուր կանե տանը.  
Կիսատ-պռատ շինած բանը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Առողջ տղին տուր երիվար,  
Որ թռչի երթա սարեսար.  
Անոտ մարդուն հարթ ճանապարհ,  
Եղած՝ չեղած - մեկ հաշիվ է:

Նրանք չունեն շնորհք ու շենք.  
Գանգատվելն է նրանց օրենք.  
Երկչոտներուն զրահ ու զենք,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Կտրիճ ազգն է ինքնին հնոց,  
Միշտ կարձակե կրակ ու բոց,  
Փախչող գորքին բերդ ու ամրոց  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Սկզբեն է հարկավոր ջանք,  
Քանի որ հիվանդն ունի կյանք,  
Հոգեվարքին դեղ ու դեղրանք,  
Եղած՝ չեղած - մեկ հաշիվ է:

Խեղճին ինչ օգուտ իշխանը.  
Որ չի հասնի նեղությանը.  
Անտարբեր, պաղ ազգականը,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Երբ որ տեղը գա ճշմարիտ,  
Հարկավոր չէ լինել կրկիտ.  
Զատկից հետո կարմիր հավկիթ,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Ուրախության օրը հատուկ,  
Կուրախանան ծեր ու մանուկ.  
Հարասնիքից վերջը թմբուկ,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

Զիվան, բարեսիրտն է հարմար  
Լսել սիրով երգ ու քնար,

Չար ու դաժան մարդու համար,  
Եղած՝ չեղած — մեկ հաշիվ է:

1880

## ՀՊԱՐՏ ՀԱՐՈՒՍՏ

Պարոն հարուստ, ինչո՞ւ այդքան հպարտ ես,  
Ունայն աշխարհի մեջ բաղձանքդ ի՞նչ է.  
Վերջ ի վերջո դու էլ կյանքդ կավարտես,  
Իզուր մտածմունքդ, տանջանքդ ի՞նչ է:

Փարթամացիր հին Դարեհին հավասար,  
Օր կըգա չես գտնիր վերքիդ դեղ ու ճար.  
Ոչ հոգուդ ես և ոչ մարմնուդ համար,  
Ուրեմն, սիրելիս, զուր ջանքդ ի՞նչ է:

Թե մեղքի մեջ մեռար՝ մեծ ցավ է վերջը,  
Գիտես, դատաստան կա, իրավ է, վերջը.  
Երկուսիս էլ չորս չափ կտավ է վերջը,  
Քու ինձանից ավել ապրանքդ ի՞նչ է:

Ջիվանս լավ գիտե, փառքդ մեկ ձև է,  
Աշխարհումս շուտ անցավոր պարզն է.  
Հարյուր տարի ապրիս մեծ մասը սև է,  
Քու երջանիկ սեպած լավ կյանքդ ի՞նչ է:

1883

## ԱՆՀԱՎԱՆԸ

Անկիրթ մարդը յուր բանը չգիտնալով՝  
Կատարյալի լավ վիճակին չի հավնի.  
Իրան մեջը մեկ գիտության հուսալով՝  
Վարժապետի օրինակին չի հավնի:

Կատվից կինայի մեկ կտոր չոր հաց,  
Ամեն օր ծեծ, կնոջ աչքերումը լաց.  
Մեկ նոր հագուստ չունի՝ ողջ մարմինը բաց,  
Մեծատանը ժամանակին չի հավնի:

Մեկ տուն ունի անլույս, խավար, կյանք մաշող,  
Խնդությունից զրկող, ստամոքս խաշող,  
Չորթանն ապուրի միշտ կարոտ քաշող՝  
Արքայի մաքուր խորակին չի հավնի:

Բոլորովին թողած յուր գործը, բանը,  
Փորն անոթի, բաց մնացած բերանը,  
Հինգ հատ պղինձ դրամ չունի գրպանը,  
Ոսկով լեցուն գանձանակին չի հավնի:

Ամեն մարդ երեսին կուտա արատը,  
Չի մաքրվի, թե լողանա Եփրատը,  
Արձճե մատանիք չունի յուր մատը՝  
Սողոմոնի մատնու ակին չի հավնի:

Երեսը՝ թարշամած վարդի տերև է,  
Շրթունքներն անշորի, քիթը անձև է,  
Գույնը գործելիից հինգպատիկ սև է,  
Անշամանդաղ նոր լուսնակին չի հավնի:



Հարյուր կարկատանե վերարկուն ճերմակ,  
Մկի նման որոնում է գաղտնի ծակ.  
Գլխին խոտ կփաթաթե, չունի մեկ գդակ՝  
Հին պապի արտախուրակին չի հավնի:

Վիզը ծուռ՝ կնայե ծեր ուղտի նման,  
Իսկ Մարաց հովվի պես հանդերձն անարժան,  
Ամեն մի ատամը մի մուրճ իսկական,  
Մարգարիտ-բուստ-շարունակին չի հավնի:

Երկու հյուր շահելու մեկ սեղան չունի,  
Թափառական մարդ է, օթևան չունի,  
Կես կորեկ ցանելու անդաստան չունի,  
Մեծ իշխանի ագարակին չի հավնի:

Որ տեսնի ստվերը, քարերից կգա,  
Երկյուղից կլինի նա տակն ու վերա,  
Հավի ազից տասը պտույտ կդառնա,  
Նժույզ նստող շահատակին չի հավնի:

Կյանքը առողջ տարին բոլոր չի գտնի,  
Հնություն մեջ զբաղված՝ նոր չի գտնի՝  
Հիվանդանա՝ թթու խնձոր չի գտնի,  
Կայսերապատկան կամակին չի հավնի:

Մեկ ուղիղ խրատիչ բարեկամ չունի,  
Միշտ օրերը տխուր, ուրախ ժամ չունի,  
Իր տանը վառելու մարխ անգամ չունի,  
Ուրիշների աշտանակին չի հավնի:

Գլուխը ազատ չէ ցավից, վտանգից,  
Ողջ մարմնո վերա հագած պատանքից՝  
Նոր մեկ ոխալ բան է հաներ յուր հանգից,

Հագարամյա հիշատակին չի հավնի:

Չի գիտեր կրոնը քրիստոնության,  
Չի գիտեր անուշիկ լեզուն հայկական,  
Այլ և այլ չար ոտիս թշնամյաց նման,  
Հայկ և Արամ, Արմենակին չի հավնի:

Յուր տգիտությանը աշխարհն է վկա,  
Կձևանա բարձր, մեծ փիլիսոփա,  
Յուր փորձիցը այբի կտոր դուրս չի գա,  
«Մեղվին», «Փորձին» և «Մշակին» չի հավնի:

Թող չձանձրանա իմ քաջ բարեկամը,  
Որ ես շատ հիշեցի այս անզգամը,  
Վնաս չունի, թող քիչ վաճառե ժամը,  
Զիվան, ով քու նպատակին չի հավնի:

1869-77

---

## ԱՐԾԱԹ

Միսլ է այն մարդը որ քեզի կատե,  
Շատ հարկավոր բան ես, գեղեցիկ արծաթ,  
Բոլոր աշխարհի մեջ հարգողդ շատ է,  
Իրավ հարգելի ես, իստուտիկ արծաթ:

Իմ ազգիս գրպանեն եղիր անպակաս,  
Ներկա թե ապագա չես մեզի վնաս,  
Թշվառին, տրտումին ցնծություն կուտաս,  
Քեզանով կլինեն երջանիկ, արծաթ:

Շատերը քեզ համար չունին հանգիստ քուն,  
Քո սիրույդ ման կուզան թողած տեղ ու տուն,  
Ինչ մարդու սնդուկը լիքը եղար դուն,  
Նա է մարդկանց միջին անդրանիկ, արծաթ:

Երեսդ շատ տաք է, հարգելի մետաղ,  
Ախ, թե ունենայի քեզնից քանիմ մաղ  
Մեծ բախտավորություն կստանայի վաղ,  
Կտայի ամենին ավետիք, արծաթ:

Թեև անիրավ ես գիտեմ, մամոնա,  
Բայց մարդ պետք է քեզի բարեկամ մնա,  
Իմաստունն էլ թե քեզանից չունենա,  
Չի կարող ձեռք բերել լոկ հացիկ, արծաթ:

Համդ չառնողներուն լեղի ես, դառն ես,  
Աղքատներու համար հեռի ես, սառն ես,  
Առանց պատերազմի քաղաք, բերդ կառնես,  
Որքան էլ որ լինի անառիկ, արծաթ:

Կա մարդ քեզ կսիրե յուր հոգու նման,  
Միրույդ զոհ լինելով կերթա գերեզման,  
Շատերը քեզ համար կելլեն կախաղան,  
Ոմանց էլ կբերես սև զատիկ, արծաթ:

Կռապաշտները քեզ դրին կարգը դից,  
Եղար Արամազդին հատուկ ուխտակից,  
Երբայեցվոց ազգը, բոլոր ազգերից  
Քեզ ավել կսիրե հինգապատիկ, արծաթ:

Հոգին ես, դու կյանքն ես ազահ ժլատին,  
Օհ, թե թողիդ թոռն էլ երթար աղքատին.  
Երկու սեռն էլ քեզի համար կաշխատին,

Թե տղա է եղել, թե աղջիկ, արծաթ:

Հուդան քեզ սիրելով հետևավ չարին,  
Արյան գինը դարձար սուրբ կենարարին.  
Զինվորեն սկսած մինչ նախարարին,  
Դուն ես մշտահասույթ և ոռճիկ, արծաթ:

Թե ճգնավոր լինի, թե սրբակյաց կույս,  
Նրանց մեջն էլ քեզի դնող կլնի հույս,  
Համրին լեզու կուտաս, կույրին աչքի լույս,  
Զորությունդ շատ է, անուշիկ արծաթ:

Կեցցե քեզի գտնող այն հանճարեղը,  
Սիրույդ կգրավվի ամենագեղը,  
Բոլոր պարագայով մարդկային ցեղը՝  
Եղել է դիմացդ խաղալիք, արծաթ:

Նախ ասի, անպետք չես դու, պատվական ես,  
Զորությունդ շատ ու քիչ կբաժանես,  
Որին Անանյանց ու Միրզայանց կանես,  
Որին էլ կթողնես փերեզիկ, արծաթ:

Այլոց մոտ անհամար, ինձի մոտ սակավ,  
Երբեմն գլխաբաց, բոբիկ անհավավ,  
Ահա երեսունը վեց տարիս չբացավ,  
Չտեսա մի փոքր արկղիկ արծաթ:

Ունեցել եմ քեզ ճարելու նպատակ,  
Շատ ցավերդ եմ քաշել պատվույդ փոխանակ,  
Զիվանն եմ, գովեստիս դեմը հակառակ,  
Դու ինձի ատեցիր շատ սաստիկ, արծաթ:

---

## ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հարուստը կերթա ման գալու,  
Կառքը հասարակն է տանում.  
Աղքատը բան չունի տալու,  
Բայց ցավը միջակն է տանում:

Շենը տիրացել է բախտի,  
Ոսկի, արծաթ, կալվածք ունի.  
Աղքատն էլ մուրալով կապրի,  
Մեծ բեռը մշակն է տանում:

Զորապետը ունի պաշտպան,  
Այրուծի բազում զորական.  
Գնդակը դիպչում է նրան,  
Ով որ դրոշակն է տանում:

Նավապետինն է համբավը,  
Նավաստին է վարում նավը.  
Հորը բոլոր հոգս ու ցավը  
Աշխատող զավակն է տանում:

1902

ԽՐԱՏ ԱԳՌԱՎԻՆ

Տգեղ ագռավ, նոր փետուրներ գտնելով  
Իգուր մի աշխատիր, սոխակ չես դառնալ:  
Իբր թռչնակ, երամի մեջ մտնելով  
Չես փոփոխվիլ, նույնն ես, տատրակ չես դառնալ:

Հանդերձը իսելք չի տար, դարձյալ դու իսն ես,  
Ձայնդ տաղտկալի է, կերպով տձն ես,  
Նրա ոտքերն է սև, դու ամբո՛ղջ սև ես,  
Սիրամարգին անգամ մշակ չես դառնալ:

Թե ուզում ես հագիր լուսեղեն հալավ,  
Ձայնդ քեզ մատնելով, ասում են ագռավ,  
Կաղ ի կաղ քայլերով չես լինիր կաքավ,  
Քեզ կրճաղրեն, լավ օրինակ չես դառնալ:

Դու ձմռան խոսնակ ես, հագիր տաք մուշտակ,  
Խոպոտ ձայնով բարձրացուր աղաղակ.  
Հոգիդ խարդախ, արդարության հակառակ,  
Դևի սեռ ես, դու հրեշտակ չես դառնալ:

Ջիվանուս հետ կասեն թռչուններն համայն,  
Սոխակի շնորհի՛վ ապրում ես միայն,  
Ոչ նվազել ունիս և ոչ քաղցր ձայն.  
Մեռնիս, տրաքիս, որ երգակ չես դառնալ:

1884

---

## ԾԵՓԱԾ ՊԱՏ

Շատ մի ուռիլ, մեծամտիլ ծեփած պատ,  
Կտորներդ քարհանքից են դուրս եկած,

Թե չլինէր հմուտ վարպետ քարահատ,  
Կըմնայիր հողի տակը ծածկված:

Քու կշտիդ խրճիթն էլ քեզի պես մինն է,  
Քեզ սիրունացնողը չափը, կարկինն է,  
Շնորհքը վարպետի ճարտար գրչինն է,  
Որ դու այժմ այդպես բարձրը ես կանգնած:

Կարո՞ղ ես դիմանալ ջրին, կրակին,  
Օդի բարկությանը, ահեղ կայծակին,  
Մի ծաղրիւր հին ձևով շինած տնակին,  
Նրա հիմքը քուկեղ ամուր է դրված:

Միջինդ ավագ է մի հատ կիր չկա,  
Գաղտնիքդ ե՛ս գիտեմ, մի հպարտանա,  
Ո՛վ գիտե շատ շուտով հետքդ չերևա,  
Տեսնում ենք քո տեղդ ջոկ տուն է շինված:

1908

## ԱՔԼՈՐ ԵՂԲԱՅՐ

Աքլոր եղբայր, ձանձրացուցիր դու մեզի,  
Անտեղի, ամեն օր միշտ ճվալով սուր.  
Հիմա ժամացույց կա, կարոտ չենք քեզի,  
Գնա այսուհետև ուրիշ տեղ ձայն տուր:

Վերայիդ գույները շատ այլանդակ են,  
Մինչ՝ Նոյից մնացած հին օրինակ են,

Թնիդ բմբուլները մեկ-մեկ նիզակ են,  
Ոչ մի թռչուն ունի քեզ նման փետուր:

Է՛հ, շատ անճոռնի է ձայնդ, աքլոր ջան.  
Դու չես կարող լինել երգիչ, երգաբան,  
Քեզի պեսք է մի գեղեցիկ հավարան,  
Պատրաստել մինչև ի մահ քեզի կուտ ու ջուր:

Տեսակդ շատ հին է, նման չունիս, ոչ,  
Մտել ու ելել ես ամեն մի խոռոչ.  
Ոչ մի թռչուն չունի պոչիդ նման պոչ,  
Կատարիդ պես կարմիր փունջ հերագանգուր:

Իմացա, ուզում ես, որ լինիս կաքավ,  
Քայլերդ կըշինեն քեզի սև ագռավ,  
Դու մեր հին աքլորն ես, թե վատ, թեկուզ լավ.  
Պահել պեսք է քեզի, տալ հին կերակուր:

Սանտր ունիս գլխիդ վերա ահագին,  
Հովնան մարգարեի հնացած դելփին,  
Զիվանս քաջ գիտե, դու ես հավածին,  
Երբեմն էլ կլինիս հավագող ուրուր:

---

## ՄՏԱԽՈՍԸ

Ստախոսի ջրով փլավ եփողը  
Փորը բան չի մտնիլ, քաղցած կմնա,  
Նրա սուտ խոստումին հավատացողը  
Բնավ չի բարձրանա, միշտ ցած կմնա:



Լուսնին հաչող շունը չի դառնալ որսկան,  
Ոչ է՛լ քամի վոնդողը՝ դերասան,  
Ստախոսը եթե լինի փաստաբան,  
Պաշտպանվածը բանտում պառկած կմնա:

Ստախոսի տունը հրդեհ է ընկել,  
Մարդ չի հավատացել, երբ լուր են տվել.  
Ստախոսին ով որ ուզում է լսել,  
Կըսխավվի, նա ետ ընկած կմնա:

Ջիվան, ստախոսն է ծով կրակողը,  
Օդի հետ կռվողը, քամի թակողը,  
Նրա տված հուսով մահ ճաշակողը  
Հարություն չի առնի, մեռած կմնա:

1902

### ԽԵՆԹ ՈՉԽԱՐՆԵՐԸ

Մըրի միջից ելան, մրջուրը մտան—  
Երջանկության հասան իենթ ոչխարները.  
Բորենուց փախչելով, գայլի ճանկն ընկան —  
Տեր ու պաշտպան գտան իենթ ոչխարները:

Տեղերը մնացին այծերը խիզախ,  
Պոզերը սրեցին, կռվեցին անվախ.  
Թողին գոմ ու արոտ և սիրուն փարախ,  
Խրտնեցան ու փախան իենթ ոչխարները:

Իրանց տեղը կեմով էին կապկապած,

Այլ տեղ պողպատ շղթա վզերը անցած.  
Խորովածի համար հարմար արարած,  
Կաթ ու բուրդ էլ կուտան խենթ ոչխարները:

Իրանց հին հովիվը իրանցից խելառ,  
Կոտորեց չափազանց մատաղահաս գառ  
Այդ հարվածը եղավ նրանց բուն պատճառ,  
Որ տարագիր եղան խենթ ոչխարները:

Հգոր հովվի հոտի հետը միացան,  
Փրկըվելու էլ հույս չկա հավիտյան.  
Իրանք իրանց պատրաստեցին գերեզման,  
Հազիվ հանգստացան խենթ ոչխարները: